

Քաջբերունին, քննադատելով Ջալալյան-
ցին, աշխատել է նրա բաց թողած արձանա-
գրություններն ընդօրինակել և հրատարա-
կել: Այդ նպատակով հրատարակել է մեր
ժողովածուի 8, 95, 162, 163 և 177 արձա-
նագրությունները, իսկ մեկն էլ (թ. 53) մեջ
է բերել ցույց տալու համար, թե Ջալալյան-
ցըն ինչ չափով սխալ է կարդացել:

Սակայն, Քաջբերունին ինքն էլ զգալի
սխալներ է թույլ տվել իր կարդացած արձա-
նագրությունների մեջ: Այսպես, օրինակ,
մեր ժողովածուի № 177-ի ՃՍՊ ետ յաազանս
(հարյուր սպիտակ տվեց ավազանի (շինու-
թյան) կարդացել է՝ ճարտարապետ աազա-
նիս:

1898 թվականին «Ազգագրական Հան-
դես»-ի երրորդ գրքում լույս տեսավ Իսահակ
Հարությունյանի Սանահնի վանքին նվիրած
ընդարձակ հոդվածը, որի մեջ, բացի վանքի
նկարագրությունից և պատմական տեղե-
կություններ հաղորդելուց, մեջ է բերել նաև
30 վիմական արձանագրություն, որոնցից
9-ը հրատարակվել են առաջին անգամ,
դրանք մեր ժողովածուի 3, 67, 99, 102, 111,
145, 160, 164 և 187 համարներն են: Մնա-
ցած 21 արձանագրություններից 19-ը ար-
դեն հրատարակված են եղել Ջալալյանցի և
2-ն էլ Քաջբերունու կողմից¹:

Հարությունյանը ևս աշխատել է կարդալ
միմիայն լավ պահպանված արձանագրու-
թյունները, նա էլ խմբագրել է լեզուն, օգ-
տվել է իր նախորդների հրատարակու-
թյուններից, գլխավորապես Ջալալյանցից և
կրկնել է նրա սխալները: Դրա լավ ապա-
ցույցը կարող է համարվել մեր ժողովածուի
№ 169 արձանագրությունը, որ Գրիգոր Տու-
տեորդուն է պատկանում:

Հայտնի է, որ վրացիք Գուրգեն անունով
թագավոր չեն ունեցել 1184 թվականին: Այդ
ժամանակ Վրաստանի թագավորը Գեորգի
3-րդն էր, Թամարի հայրը, և հենց այդ թվա-
կանին էլ նա մեռավ և Վրաստանի թագն ան-
ցավ Թամարին:

Տուտեորդու արձանագրության մեջ վրաց
այդ թագավորի անունը գրված է Գիուրգե
ձեով: Ջալալյանցն այդ անունը սխալմամբ

կարդացել է Գուրգեն, Հարությունյանը, օգտ-
վելով Ջալալյանից՝ նույն սխալը կրկնել է:
Դեռ ավելին: Այդ նույն արձանագրության
մեջ ի հայտուբեանս Յովհաննիսի (14 տող)
Ջալալյանցը կարդացել է ի հայրապետու-
րեան Յովհաննիսի, առանց հաշվի առնե-
լու, որ հայրությունը վերաբերում է վանքի
առաջնորդին, իսկ հայրապետությունը՝ հա-
յոց կաթողիկոսին. մանավանդ որ հայերն
այդ ժամանակ Հովհաննես անունով կաթո-
ղիկոս չեն ունեցել: Ջալալյանցի այդ սխալը
ևս կրկնել է նրանից օգտվող Հարությունյա-
նը: Նույն արձանագրության վերջին կա
Ավետիս անվան փակագրությունը, որ Ջա-
լալյանցը չի ընդօրինակել: Նույնն է արել
նաև նրանից արտագրող Հարությունյանը:

Բերենք մի երկու օրինակ ևս.

Մեր ժողովածուի 170 արձանագրության
մի տողը Ջալալյանցը մոռացմամբ բաց է
թողել և չի ընդօրինակել, որի հետևանքով
այդ արձանագրությունը մնացել է անթվա-
կան: Նույն սխալը կատարել է նաև Ի. Հա-
րությունյանը:

Այդ արձանագրության 6-րդ տողում
սնուցողի բառը Ջալալյանցը սխալմամբ
կարդացել է ուսուցանողի: Նույնը կրկնել է
նաև Հարությունյանը:

Այսպիսով, պարզվում է, որ Հարուսթյու-
նյանը օգտվել և տեղ-տեղ էլ դժվարանալով՝
ուղղակի արտագրել է Ջալալյանցից՝ այն էլ
առանց քննադատական վերաբերմունքի:

Ավելի վատ է վարվել ազգագրագետ
Երվանդ Լալայանը, որ 1901 թվականին
նույն «Ազգագրական Հանդես»-ի 7—8
միացյալ գրքում իր «Բուրջալուի գավառը»
վերնագիրն ունեցող ազգագրական աշխա-
տության մեջ գրել է նաև Սանահնի վանքի
15 արձանագրություն, որոնք բոլորն էլ
արտագրել է Իսահակ Հարությունյանից,
առանց այդ մասին որևէ հիշատակու-
թյուն², այն էլ Իսահակ Հարությունյանից
ընդամենը երեք տարի հետո և կրկնել է նրա
թույլ տված բոլոր սխալներն առանց բա-
ցառության:

Բերենք մի քանի փաստեր:

Մեր ժողովածուի 162 արձանագրությունն

¹ Ի. Հարությունյան, Սանահն, «Ազգագրական Հանդես», գիրք Գ, 1898, Թիֆլիս, էջ
273—315:

² Բուրջալուի գավառ, Ե. Լալայանի, «Ազգագրական Հանդես», գիրք 7—8-րդ, Թիֆլիս, 1901,
Սանահնի վերաբերյալ մասը՝ էջ 373—395: